ՀՀ Ֆինանսների նախարարություն,
նախարարի տեղակալ Արման Պողոսյանին
/Դիմողի անուն, ազգանուն/
/Բնակության, աշխատանքի կամ ուսման վայրի հասցեն,
իսկ իրավաբանական անձի դեպքում՝ անվանում և գտնվելու վայրը /

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պրն. Պողոսյան,
«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի և հարակից օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ e-draft.am կայքում հրապարակված տեղեկատվությունը բավարար չէ արդյունավետ հանրային քննարկման ընթացքի համար:
Այդ պատճառով անհրաժեշտ է հանրային քննարկմանը ներկայացնել 2018թ. հոկտեմբերի 19-ին «Կոնգրես» հյուրանոցում տեղի ունեցած «Պրոգրեսիվ հարկումն ընդդեմ համահարթեցման» թեմայով քննարկմանը մասնակցած ՀՀ Վարչապետի խորհրդական Մեսրոպ Առաքելյանի կողմից հիշատակած Կառավարության խորքային վերլուծություններն ու հետազոտությունները, որոնք ըստ պրն. Առաքելյանի, հիմնավորում են նախագծի անհրաժեշտությունն ու արդյունավետությունը:
Խնդրում ենք տրամադրել.

- վարչապետի հանձնարարականը նախագիծը պատրաստող աշխատանքային խմբի ստեղծման մասին,
- աշխատանքային խմբի ամբողջական կազմը,
- փոփոխությունների վերաբերյալ Կառավարության կողմից իրականացված (կամ իրականացումը երրորդ կողմին պատվիրած) վերլուծություններն ու հետազոտությունները՝ անկախ դրանց մատչելի կամ նեղ մասնագիտական բովանդակությունից:

Տեղեկատվության տրամադրման համար լրացուցիչ աշխատանք կատարելու անհրաժեշտության պատճառով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածում նշված 5 օրերի ընթացքում տեղեկատվությունը տրամադրելու անհնարիության դեպքում խնդրում ենք տեղեկացնել պատշաճ ժամկետներում _____ էլեկտրոնային հասցեով:

Հարգանքով՝ _____